

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 41/1

20 հոկտեմբերի 2015 թ.

Քննարկվեց «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ կողմից ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 24.12.2013 թ-ի թիվ 1024191/2 ակտի դեմ բերված 20.02.2014 թ-ի բողոքի վերաբերյալ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 12.03.2014 թ-ի թիվ 12/1 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսելու և ըստ էության որոշում կայացնելու հարցը:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.10.2012 թ-ի թիվ 1024191/2 հանձնարարագրի համաձայն «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության վերստուգում: Նշված հանձնարարագրի հրապարակման համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ռ.Մկրտչյանի «Քրեական գործով հարկային վերստուգում նշանակելու մասին» 23.08.2012 թ-ի որոշումը: Վերստուգման արդյունքում կազմվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 24.12.2013 թ-ի թիվ 1024191/2 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 310.158.130 դրամ:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի (այսուհետ նաև Հանձնաժողով) 12.03.2014 թ-ի նիստում քննության է առնվել «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ի 20.02.2014 թ-ի բողոքը Ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 12/1 որոշումը, որի համաձայն «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ 20.02.2014 թ-ի բողոքի հիման վրա ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեում հարուցված վարչական վարույթը կասեցվել է: Նման որոշում կայացնելու համար հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ «Մեզա Գոլդ» ՍՊԸ ընկերության տնօրեն Աշոտ Պողոսյանի (որը հանդիսանում է նաև «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ տնօրենը) կողմից հարկման հիմք հանդիսացող փաստաթղթերում ակնհայտ խեղաթյուրված տվյալներ մտցնելու միջոցով խոշոր չափի հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դեպքի առթիվ ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության քննիչ Ռ.Մկրտչյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 83156811 քրեական գործը:

ՀՀ ՖՆ քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ռ.Մկրտչյանի 15.01.2015 թ-ի որոշման համաձայն թիվ 83156811 քրեական գործով վարույթը կարճվել է, ինչպես նաև որոշվել է Աշոտ Մարտունի Պողոսյանի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Թիվ 83156811 քրեական գործով վարույթը կարճելու համար մասնավորապես հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ հարկման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում սխալ տեղեկությունները ներառվել են ոչ թե հարկերը վճարելուց չարամտորեն խուսափելու դիտավորությամբ, այլ հաշվապահական հաշվառման սխալ վարման արդյունքում, որի հետևանքով ընկերությանը վերստուգման ակտով առաջադրված և դատահաշվապահական փորձաքննությամբ ճշտված լրացուցիչ վճարման ենթակա հարկային

պարտավորություններն ամբողջությամբ՝ տույժ և տուգանքներով հանդերձ, վերականգնվել են:

Քննարկվող դեպքում գործ ունենք մի իրավիճակի հետ, երբ մի կողմից առկա է ՀՀ ԿԱ ՊԵԿ ՕՀՎ 24.12.2013 թ-ի թիվ 1024191/2 ակտը, որի համաձայն ընկերության բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 310.158.130 դրամ, մյուս կողմից՝ վերոգրյալ քրեական գործի շրջանակներում Ակտով առաջադրված պարտավորությունների հիմնավորվածությունը պարզելու նպատակով նշանակված դատահաշվապահական փորձաքննության արդյունքում կազմված թիվ ՓԵ2469-14-022 փորձագետի եզրակացությունը, որի համաձայն ընկերության բյուջեի նկատմամբ հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 25.907.099 դրամ: Ընդ որում հարկ է նշել, որ թիվ ՓԵ2469-14-022 փորձագետի եզրակացությունը և դրանով ճշտված լրացուցիչ վճարման ենթակա հարկային պարտավորությունները ՀՀ ՖՆ քննչական վարչության ՀԿԳ քննիչ Ռ.Մկրտչյանի կողմից հիմք են ընդունվել թիվ 83156811 քրեական գործով վարույթը կարճելու վերաբերյալ 15.01.2015 թ-ի որոշումը կայացնելիս:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Անորոշ ժամկետով ընդունված գրավոր վարչական ակտը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ չի փոխարինվել մեկ այլ վարչական ակտով կամ սույն օրենքով սահմանված կարգով անվավեր կամ ուժը կորցրած չի ճանաչվել, կամ օրենքով նախատեսված որևէ այլ հիմքով դրա գործողությունը չի դադարեցվել»:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 31.10.2012 թ-ի թիվ 1024191/2 հանձնարարագրով վերստուգված ժամանակաշրջանում «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ի իրական պարտավորությունների չափը որոշելու համար ընկերությունում անհրաժեշտ է իրականացնել բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի 27.05.2015 թ-ի վճռով «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ն ճանաչվել է սնանկ:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

### ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 12.03.2014 թ-ի թիվ 12/1 որոշմամբ կասեցված վարույթը վերսկսել:

2. Միջնորդություն ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարին «Գլոբալ Գոլդ Հանքավան» ՍՊԸ-ում բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության վերստուգում կատարելու համար:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ